Սկիզբը՝ էջ 2

## Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ սենատոր Ջեֆ Սմոքին

Մարտի 24-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ սենատոր Ջեֆ Սմոքին՝ Արեւմտյան ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախմբի անդամների ուղեկցությամբ:

Կալիֆոռնիայի նահանգը, որի սենատի անդամն է Ջեֆ Սմոքը, ամենահայաշատն է ԱՄՆ-ում:

Նորին Սրբությունը, ողջունելով սենատորին, բարձր գնահատեց նրա ջանքերը նահանգային օրենսդիր մարմնում հայոց մեծ եղեռնի խնդիրը բարձրացնելու եւ պաշտպանելու համար: Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաեւ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի 1700-ամյա պատմությանը, Հայ եկեղեցու ներկա կյանքին:

Սենատոր Ջեֆ Սմոքը շնորհակալություն հայտնեց ընդունելության համար եւ հավաստիացրեց, որ շարունակելու է իր գործունեությամբ նպաստել երկու երկրների կապերի սերտացմանն ու ամրապնդմանը:

## Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն այցելեց Աբովյանի կանանց եւ անչափահասների կալանավայր

Մարտի 27-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն այցելեց «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ՝ Աբովյանի կանանց եւ անչափահասների կալանավայր, Մեծ պահոց շրջանում Քրիստոսի հարության խորհրդով մխիթարություն բերելու ազատազրկման մեջ գտնվող կանանց եւ անչափահասներին:

Այցի ընթացքում քրեակատարողական վարչության պետ Ս. Հովհաննիսյանը եւ կալանավայրի պետ Յ. Ջամալյանը



Նորին Սրբությանը ներկայացրեցին կալանավայրի խնդիրներն ու առօրյան, որից հետո Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ ազատազրկվածների հետ եւ իր պատգամն ուղղեց նրանց:

«Աստված ամենուր մեզ հետ է, Աստված հավասարապես սիրում է ամենքիս, եւ դեպի Աստված դարձի ճանապարհը բոլորիս առջեւ բաց է: Պարզապես պետք է կարողանանք ինքներս մեր մեջ գտնել արիությունը այդ ճանապարհը տեսնելու, տեսնելու մեր կյանքի մեջ Լույսը եւ առաջնորդվելու դեպի այդ Լույսը՝ թողնելով մեր հետեւում ե՛ւ խավար, ե՛ւ բոլոր տեսակի այն մտածումներն ու զգացումները, որոնք հեռացնում են մեզ Աստծուց»,- ասաց Նորին Սրբությունը:

Վեհափառ Հայրապետը նշեց, որ Հայ եկեղեցին մշտապես հիշում է իր բոլոր զավակներին՝ հայցելով Տիրոջ օգնականությունը, սերը եւ ողորմությունը, որպեսզի ամենքին առաջնորդի կյանքի շիտակ ճանապարհով:

Հանդիպման ավարտին ազատազրկվածները ներկայացրեցին գեղարվեստական հայտագիր, ապա Նորին Սրբությունն առանձին զրույց ունեցավ նրանց հետ:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը եւ ՀՀ զինված ուժերի հոգեւոր տեսուչ Տ. Արշեն աբեղա Սանոսյանը:

## Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Հունաստանի դեսպանին

Մարտի 29-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Հունաստանի Հանրապետության նորանշանակ դեսպան Անտոնիոս Վլավիանոսին եւ իր ողջույնն ու բարեմաղթանքը հայտնեց նրան՝ Հայաստանում դիվանագիտական առաքելություն սկսելու առիթով:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն ուրախություն հայտնեց, որ Հայաստան-Հունաստան պատմական կապերն արդի ժամանակներում ամրապնդվում են ջերմ համագործակցությամբ: Այս առիթով Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ նորանշանակ դեսպանը, ինչպես իր նախորդը, մեծապես նպաստելու է երկու երկրների եւ ժողովուրդների հարաբերությունների առավել զարգացմանը:

### ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դատապարտում է «Հայկական ժամանակ» օրաթերթի՝ մտացածին վերագրումներով, սխալ հայտարարություններով ու մեկնաբանություններով շարադրված «Էջմիածինն ընդդեմ «Նոյյան տապանի» հրապարակումը («Հայկական ժամանակ», 27. 03. 2002 թ.):

Մայր Աթոռս հորդորում է սեփական շահերը պաշտպանել՝ չշահարկելով Սուրբ Էջմիածնի եւ Ամենայն Հայոց Հայրապետի անունը:

*ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՈՏՆԼՎԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

## Քարոզ՝ ըստ սբ. Գրիգոր Տաթեւացու

Մեծ եւ ծածուկ խորհուրդ է հայտնվում մեզ այսօր, քանզի մարդացած Բանը՝ Աստվածը, կամովի խոնարհվում է դեպի չարչարանքները. Օրհնությունն անեծք է ընդունում, եւ Կյանքը մահ է ճաշակում: Նա, Ով բոլորի պաշտելին էր, ծառայեց ու սպասավորեց մարդկանց, ինչպես այսօր ծնկի գալով լվացավ Իր աշակերտների ոտքերը:

Եվ իմանալու համար, թե ինչ պատճառ կամ խորհուրդ ունի նրանց ոտքերը լվանալը, պետք է մտովի ընթանալ դեպի աշխարհի արարչության սկիզբը եւ ըստ կարգի բացահայտել իրողությունը: Նախ՝ արարչագործության հինգերորդ օրը, որ հինգշաբթին է, Աստված ջրերից ձկներ գոյացրեց, իսկ օդում թռչուններ ստեղծեց: Եվ այս՝ Ավագ հինգշաբթի օրն Աստված լվացավ աշակերտների ոտքերը եւ թեթեւացրեց նրանց՝ երկինք թռչելու համար, որպեսզի իմանան, որ մի եւ նույն Աստվածն է, որ հինգշաբթի օրն ստեղծեց թռչուններին եւ այս՝ հինգշաբթում էլ Վերնատանը լվացավ աշակերտների ոտքերը:

Նախաստեղծները՝ Ադամն ու Եվան, ոտքերով ծառին մոտեցան ու կերան արգելված պտղից եւ մեղանչեցին Աստծո պատվիրանի դեմ, որի համար Տերը նրանց դատապարտեց՝ ասելով օձին. «Դու պիտի խայթես նրա գարշապարը» (Ծննդ. 3:15): Ահա այսօր Տերը լվացավ Իր աշակերտների ոտքերը՝ նրանց ազատելով նախաստեղծների դատապարտությունից: Նախածնողների մեղանչելուց հետո մարդկային ազգը, զանազան մեղքերի մեջ թաղվելով, ապականվեց, ինչպես գրված է. «Երկրի վրա ամեն էակ ապականեց իր ճանապարհը» (Ծննդ. 6:12): Դրա համար էլ Աստված ջրհեղեղով սրբեց աշխարհը, կործանեց մեղքն ու մեղավորներին, մնացին միայն Նոյն ու իր որդիները: Նոյն արդար էր եւ իր արդարությամբ սերմ ու սկիզբ եղավ աշխարհի համար: Այդ օրինակով այսօր մեր Տերը լվացավ աշակերտների ոտքերը եւ սրբեց նրանց մեղքից, որպեսզի նրանք իրենց սրբությամբ ծնող ու սկիզբ դառնան բոլոր հավատացյալների համար:

Նույն հինգշաբթի օրն էր, որ հավատքի հայր մեծ Աբրահամը միջօրեի տապին, իր վրանի դռան մոտ նստած, Մամբրեի կաղնու մոտ տեսավ մարդու կերպարանքով իրեն մոտեցող երեք հոգու՝ երկու հրեշտակների հետ Աստծուն այցելող: Հայր Աբրահամը լվացավ նրանց ոտքերը, նրանց հյուրասիրեց բաղարջ հացով, կաթով, կարագով, խորոված հորթով: Եվ ահա Հայր Աստված ուղարկեց Իր Որդուն, Որը մարմնացավ, Աբրահամի որդի դարձավ ու վճարեց պարտքը, այսինքն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսն աշակերտների ոտքերը լվանալուց հետո նրանց բաշխեց Իր Սուրբ Մարմինն ու Արյունը: Այսօր Աբրահամի վրանի փոխարեն մեր աչքերի առջեւ Վերնատունն է, կաղնու փոխարեն՝ Սուրբ Խաչը, հորթի փոխարեն՝ Ինքը՝ Աստվածորդին՝ չարչարանքներով խորոված, բաղարջի փոխա-



րեն՝ Հաղորդության անթթխմոր հացը, կաթի փոխարեն Տիրոջ քավչարար Սուրբ Արյունը, եւ յուղի կամ կարագի փոխարեն՝ Սուրբ Հոգու օծման շնորհը:

Մովսես մարգարեն իր ժողովրդին Եգիպտոսից դուրս բերելիս պատռեց ծովը, նրանց անապատ հանեց, որտեղ եւ կերակրեց մանանայով: Այդպես եւ երկնային Վարդապետը, Իր աշակերտներին առանձնացնելով իսրայելացիներից, լվացավ նրանց ոտքերը եւ կերակրեց երկնային մանանայով: Նույն Մովսես մարգարեն անապատում ավազան պատրաստել տվեց, որպեսզի քահանաներն իրենց ոտքերն այնտեղ լվանալուց հետո մտնեն սրբության խորան: Նույն կերպ վարվեց նաեւ Սողոմոնը՝ տաճարի առաջ պղնձե ավազան դնելով: Եվ Քրիստոսն ավազան պատրաստեց ու լվացավ Նոր Ուխտի քահանայապետների՝ աշակերտների ոտքերը՝ Նոր Ուխտի քարոզիչներ լինելու եւ Աստծո Սուրբ Տաճարը՝ Նոր եկեղեցին մտնելու համար, որպեսզի ցույց տա, թե Հին եւ Նոր Ուխտի օրենքի Աստվածը մեկն է եւ նույնը:

Երբ Իսրայելի ժողովուրդը մտնում էր Քանան պարգեւների երկիրը, Նավեի որդի Հեսուն հրամայեց քահանաներին ոտքերն ընկղմել գետի մեջ ու այսպես գետի հոսանքի ուղղությունը փոխեց՝ ետ դարձնելով այն: Սա նշանակում է, որ մեր Փրկիչը՝ Քրիստոսը, աշակերտների ոտքերը ջրի մեջ ընկղմելուց եւ լվանալուց հետո հետ դարձրեց Ադամից եկող մեղքի հեղեղը եւ ապա Իր աշակերտներին հասցրեց պարգեւների երկիրը՝ Վերին Երուսաղեմ: Նախ ոտքերը լվացավ եւ հետո բաշխեց Իր Սուրբ Մարմինն ու Արյունը, որպեսզի մենք նախ մկրտվենք եւ ապա հաղորդվենք: Եվ ինչպես որ Տերն Ինքը նախ մկրտվեց, հետո բարձրացավ խաչի վրա եւ ապա երկինք, այդպես էլ նախ աշակերտների ոտքերը լվացավ եւ հետո Իր խաչի շնորհիվ նրանց Իր մոտ՝ երկինք տարավ: Իսկ ով չի մկրտվում, նա չի կարող երկնքի արքայություն մտնել:

Աստծո Որդին լվացավ աշակերտների ոտքերը եւ այդպես մեզ կատարյալ խոնարհություն սովորեցրեց: Ինչպես որ աղքատ մորից ծնվեց եւ խանձարուրով փաթաթվեց ու մսուրում դրվեց, մեր մեջ ոտքով շրջեց, հոգնեց, քաղցեց, ծարավեց, նախատվեց եւ այսօր էլ խոնարհված Իր աշակերտների ոտքերն է լվանում՝ ընդդեմ հպարտացած «անկյալ» հրեշտակի սատանայի, որ ապստամբեց ամենակալ Աստծո դեմ եւ իր հպարտության պատճառով երկնքից երկիր նետվեց: Եվ չարին հակառակ՝ Աստված խոնարհվեց, որպեսզի մեզ երկրից երկինք բարձրացնի, ինչպես Ավետարանն է ասում. «Հզորներին տապալեց իրենց աթոռներից եւ բարձրացրեց խոնարհներին» (Ղուկ. 1:52):

Ահա թե ինչու աշակերտների ոտքերը լվանալուց հետո ասաց. «Մի օրինակ տվեցի ձեզ, որ ինչպես ես ձեզ արեցի, դուք էլ նույն ձեւով անեք» (Հովհ. 13:15): Եվ ի՞նչ է մեր խոնարհությունը Նրա խոնարհության համեմատ. մենք մարդիկս, հողից ստեղծված, հողածին մարդու առաջ ենք խոնարհվում, մինչ Նա՝ երկնքի եւ երկրի Արարիչը, այսօր խոնարհվում է մարդկանց եւ հողի առաջ:

*Պատրաստեց Հ. ՂԱԶԱՐՅԱՆԸ*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՄԵԼԻՏԵ Ա ՄԱՆԱԶԿԵՐՏՑԻ
## (452-456?)

Վարդանանց պատերազմի պարտությունից հետո Հայոց եկեղեցին հայտնվեց ծանր կացության մեջ: Հոգեւոր գործիչների մեծ մասը, նշանավոր շատ իշխաններ, որոնք խաբեությամբ կամ այլ եղանակներով ձերբակալվել էին պարսից զորքերի կողմից, ուղարկվեցին Տիզբոն, որտեղ դատավարության անցկացումից հետո որոշվեց աքսորել նրանց Վրկանից աշխարհ: Մի կողմից՝ պարսից մարզպան Ատրորմիզդն իրականացնում էր պետական ահաբեկչություն՝ ահուսարսափի մեջ պահելով երկիրը, իսկ մյուս կողմից՝ աշխատում էր երկրի կյանքը հնարավորին չափ հունի մեջ դնել: Մարզպանը, գոնե արտաքնապես կամենալով ցույց տալ պարսից արքունիքի բարյացակամությունը Հայոց եկեղեցու նկատմամբ, կամենում էր օր առաջ կաթողիկոս հաստատել՝ պահպանելով եկեղեցու ինչ-ինչ ավանդույթները: Դրան մեծապես նպաստում էր նաեւ այն իրողությունը, որ բանտարկության մեջ գտնվող Հովսեփ Ա Հողոցմեցի կաթողիկոսը նույնպես գտնում էր, որ կաթողիկոսական աթոռը չի կարելի առանց հովվապետի թողնել: Գրիգոր Լուսավորչի սերունդն արական գծով սպառվել էր, ուստի հաշվի առնելով Աղբիանոսյան ընտանիքից սերած կաթողիկոսների նախկինում ցուցաբերած ոչ հռոմեամետ քաղաքականությունը՝ ընտրությունը կրկին կանգ առավ Աղբիանոսյանների վրա, եւ Մելիտե Մանազկերտցին հաստատվեց կաթողիկոսական աթոռին: Չնայած ուղղակի տեղեկությունների բացակայությանը՝ Մ. Օրմանյանը նրան միանգամայն իրավացիորեն նույնացնում է Շահապիվանի ժողովի մասնակից Մեղիտոս երեցին եւ Արտաշատի ժողովի մասնակից՝ Մանազկերտի Մելիտե եպիսկոպոսին: Կաթողիկոսական աթոռ բարձրանալիս՝ 452 թ., նա արդեն ծեր եւ հիվանդոտ անձնավորություն էր: Թեեւ նրա անունը չեն հիշատակում Հովհաննես Դրասխանակերտցին եւ կաթողիկոսների գավազանագիրք կազմողները՝ Հովսեփ Ա Հողոցմեցուց հետո կաթողիկոս հռչակելով Գյուտ Արահեզացուն, նրա կաթողիկոսությունը շատ որոշակի է՝ համաձայն Ղազար Փարպեցու տեղեկությունների: Չկամենալով Մելիտե Ա Մանազկերտցու կաթողիկոսությունը արձանագրել՝ Ասողիկը Վարդան Մամիկոնյանի մահից հետո, այսինքն՝ 451 թվից սկսած՝ անիշխանության տասը տարիներ է վերագրում Հայոց մարզպանությանը: Հեղինակը Հովսեփ Ա Հողոցմեցուց հետո կաթողիկոս է ճանաչում նույնպես Գյուտ Արահեզացուն, սակայն անիշխանության տարիները, որ նա հասկանում է Հայոց մարզպանությանը, իրականում երկրի քաղաքական իշխանությանը չեն վերաբերում, որն իրականացնում էր Ատրորմիզդը, այլ հոգեւոր իշխանությանը: Գյուտ Արահեզացու կաթողիկոսանալը հնարավոր չէ 461 թվից առաջ, ուստի 451-ից 461 թիվն ընկած ժամանակաշրջանը, որ Ասողիկը հակված է որակելու անիշխանության, այլ խոսքով՝ հոգեւոր անիշխանության տարիներ, իրականում վերաբերում են Մելիտե Ա Մանազկերտցու եւ նրան հաջորդած Մովսես Ա Մանազկերտցու հովվապետության ժամանակահատվածին: Թե ի՞նչն էր պատճառը, որ Հայոց եկեղեցին, չնայած հիշյալ հոգեւոր անձանց փաստական հովվապետությանը, նրանց չի մտցրել կաթողիկոսական գավազանագրքի մեջ, սկզբնաղբյուրների կցկտուր տեղեկությունների պատճառով դժվար է ասել: Լոկ կարելի է ենթադրել, որ ի տարբերություն երեցության եւ եպիսկոպոսության շրջանի՝ կաթողիկոսության տարիներին Մելիտե Ա Մանազկերտցու որդեգրած քաղաքականությունը, ամենայն հավանականությամբ, չի բխել ազգային շահերից, թերեւս ուղղված է եղել Սահակ Պարթեւի եւ Մեսրոպ Մաշտոցի աշակերտների դեմ, որոնցից շատերը, այդ թվում նաեւ Ղազար Փարպեցին, հալածվեցին Աբեղյան կոչված հոգեւորականների խմբի կողմից: Մ. Օրմանյանը պայմանականորեն Մելիտե Ա Մանազկերտցու հովվապետությունը դնում է 452-456 թթ., սակայն եթե կաթողիկոսության սկիզբը որոշակի է, ապա նրա վախճանի թիվը խիստ պայմանական է:

Կարելի է ենթադրել, որ նա մահացել է բնական մահով:



# ՄՈՎՍԵՍ Ա ՄԱՆԱԶԿԵՐՏՑԻ
## (456?-461)

Մելիտե Ա Մանազկերտցուն 456? թվին կաթողիկոսական աթոռին հաջորդեց Մովսես Ա Մանազկերտցին, որ նույնպես Աղբիանոսյանների ընտանիքից էր սերում: Նրա անունը նույնպես տեղ չի գտել Հայոց եկեղեցու կաթողիկոսների գավազանագրքերում, սակայն ինչպես վկայում է Ղազար Փարպեցին, Մովսես Ա Մանազկերտցին իրոք հաջորդել է Մելիտե Ա Մանազկերտցուն: Նրա կաթողիկոսությունը հիշատակում է նաեւ Թովմա Արծրունու պատմությունը՝ դնելով այն, սակայն, Մելիտեից առաջ: Նրա գործունեության վերաբերյալ պատմությունը մանրամասներ չի պահպանել: Թերեւս կարելի է ենթադրել, որ նա կաթողիկոսական աթոռին է տիրացել իր նախորդի եւ պարսից իշխանությունների օգնությամբ ու աջակցությամբ: Դատելով սկզբնաղբյուրների լռությունից՝ Մովսես Ա Մանազկերտցին շարունակել է պարսից իշխանությունների հետ համագործակցելու՝ իր նախորդի քաղաքականությունը՝ հալածելով Սահակ Պարթեւի եւ Մեսրոպ Մաշտոցի աշակերտներին: Երիցս իրավացի է Մ. Օրմանյանը՝ համարելով, որ Մելիտեի եւ Մովսեսի ապիկար ու պատվահաճ քաղաքականությունն է, որ ստիպել է Մովսես Խորենացուն գրելու իր նշանավոր «Ողբը»: Այդ գաղջ միջավայրն է պատճառ դարձել, որ պատմահայրը գրի. «Կրոնավորները կեղծավոր, ցուցամոլ, սնափառ, պատվամոլ, քան թե աստվածասեր»:

*Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ.*

## ՀԱՅ ԱԶԳԻ ԾՆՆԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

# Հայկի հաղթական պատերազմը Բելի դեմ

*Սկիզբը թիվ 3, 5*

Ճշմարիտ աստվածապաշտության զավակ Հայկը փոքրաթիվ մարդկանցով կռվի ելավ խավարի ուժերը մարմնավորող Բելի հսկա ամբոխի դեմ, որը հեղեղի նման ներխուժեց Հայկի բնակության հայրենի երկիրը:

Հայկը, Վանա լճի շրջակայքում գտնվող մի բարձունքի վրա կանգնելով, ազատատենչ կոչով դիմում է իր զորքին. «Երբ մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ, պետք է աշխատենք այն տեղին պատահել, որտեղ կանգնած լինի Բելը քաջերի խումբ բազմության մեջ, որպեսզի կամ մեռնենք, եւ մեր աղխը Բելի ծառայության տակ ընկնի, կամ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի, եւ մենք հաղթություն տանենք» (Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», Երեւան, 1961, էջ 101): Հայրենիքի ազատության ոգով ներշնչված Հայկի զորքն իջնում է բարձրադիր լեռների միջեւ գտնվող Հայոց Ձորը՝ Խոշափ գետի դաշտավայրը:

Հայկի եւ Բելի զորքերի տեղաբաշխումը նկարագրելով՝ Մովսես Խորենացին գրել է, թե Հայկի զորքը, ջրերի հոսանքի աջ կողմում՝ բարձրավանդակի վրա, ամուր դիրք գրավելով, տեսնում է «Բելի բազմաթիվ ամբոխի անկարգ հրոսակը, որ հանդուգն հարձակումով ցիրուցան սփռվում է երկրի երեսի վրա, իսկ ինքը՝ Բելը, մեծ ամբոխով հանդարտ կանգնած էր ջրի ձախ կողմում՝ մի բլրակի վրա՝ իբրեւ դիտանոցում»: Մովսես Խորենացին հստակ շեշտադրել է կռվողների աջ եւ ձախ կողմերը, առաջինը՝ որպես արդարության, իսկ երկրորդը՝ ամբարտավան հպարտության ուժերի խորհրդանիշ: Հայկը, որ կանգնած էր աջակողմյան բարձունքի վրա, հեռվում ճանաչեց «սպառազինված ջոկատի խումբը, որտեղ Բելը մի քանի ընտիր եւ սպառազինված մարդկանցով ամբոխի առաջն էր անցել, եւ երկար տարածություն կար նրա ու ամբոխի միջեւ»:



Պատմահոր նկարագրությամբ՝ Հայկը, որ հայրենի սրբությունը եւ մարդկային արդարությունն էր պաշտպանում, զինված էր միայն լայնալիճ աղեղով եւ երեքթեւյան նետով, իսկ Բելը, որի բռնավորության տենչին կարող էր վերջ տալ մահը, զինված էր չարքի բոլոր հատկանիշներով. «Նա հագել էր նշաններ կրող ծայրերով երկաթե գլխանոց, թիկունքի եւ լանջերի վրա պղնձե տախտակներ, սրունքների եւ թեւերի վրա պահպանակներ, մեջքը կապել էր գոտի, որի ձախ կողմից կախված էր երկսայրի սուրը, աջ ձեռքում բռնել էր հսկայական նիզակը, իսկ ձախում՝ վահան, նրա աջ եւ ձախ կողմում գտնվում էին ընտիր զորականներ»:

Հատկանշական է, որ Մովսես Խորենացին, Հայկի ռազմավարական բարձր արվեստի հետ մեկտեղ, նաեւ նրա զինակիցներին է ներկայացրել՝ որպես կազմակերպված եւ հմուտ զորականների. «Հայկը, տեսնելով լավ սպառազինված Տիտանյանին եւ նրա աջ ու ձախ կողմի ընտիր մարդկանց, կանգնեցնում է Արամանյակին երկու եղբայրներով՝ աջ կողմը, Կադմոսին իր ուրիշ երկու որդիներով՝ ձախ կողմը, որովհետեւ սրանք աղեղ եւ սուր գործելու մեջ հաջողակ մարդիկ էին, ինքը կանգնում է առջեւից, իսկ մյուս զորականներին կանգնեցնում է իր հետեւում, եռանկյունի ձեւով դասավորելով, հանդարտ առաջ է շարժվում»:

Ճակատամարտի ընթացքում Հայկի ռազմավարական հմտությունն ու նրա զինակիցների խիզախությունն այնքան զգալի էին, որ Բելին ու իր ռազմիկներին չփրկեցին թե՛ առաջնորդի ահարկու տեսքով սպառազինությունը եւ թե՛ իրենց ահռելի՝ ամբոխախուռն բազմությունը: Ավելին, Բելը նույնիսկ ի վիճակի չեղավ քայլ անգամ առաջ շարժվել, այլ խուճապահար բռնեց նահանջի ճանապարհը: Մովսես Խորենացին պատերազմի ընթացքի մասին պատմում է. «Երկու կողմի հսկաները, միմյանց հանդիպելով, երկրի վրա ահագին դղրդյուն բարձրացրին շահատակելով, եւ հսկայազունները իրար վրա ահ ու սարսափ գցեցին իրենց հարձակումների եղանակներով: Այնտեղ երկու կողմից ոչ սակավ հաղթանդամ մարդիկ, սրի բերանի դիպելով, տապալվելով գետին, կործանվում էին, եւ ճակատամարտը երկու կողմից էլ անպարտելի մնաց: Այս անսպասելի տարակուսական դիպվածը տեսնելով՝ Տիտանյան արքան զարհուրեց եւ նահանջելով ելավ այն բլուրը, որտեղից իջել էր, քանզի խորհում էր ամրանալ ամբոխի մեջտեղում, մինչեւ ամբողջ զորքը հասներ, որպեսզի եւս մեկ անգամ ճակատ կազմի: Աղեղնավոր Հայկը, այս բանը հասկանալով, իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային»: Հայկ նահապետի մեկ նետարձակումը բավարար եղավ ճակատամարտի ընթացքը հաղթական ավարտին հասցնելու համար: Հայկը «լրիվ քարշում է լայնալիճը, երեքթեւյանն դիպցնում է» Բելի կրծքի տախտակին, սլաքը, շեշտակիորեն թափանցելով նրա թիկունքի միջով, գետին է խրվում: Եվ այսպես՝ ճոխացած Տիտանյանը կործանվում, զարկվում է գետնին եւ հոգին փչում: Իսկ ամբոխը, տեսնելով քաջության այսպիսի մեծ գործը, փախչում է՝ «յուրաքանչյուրն իր երեսի դարձած կողմը» (նույն տեղում, էջ 101-102):

Պատերազմն ավարտվեց: Հայոց մեջ կռապաշտությունը մերժվեց հենց առաջին իսկ ճակատամարտով: Արդեն իսկ այդ ժամանակներից մեծ տեղ տրվեց հայրենիքի համար նահատակվածների հիշատակին: Հայկը «ճակատամարտի տեղը հաղթական պատերազմի պատվին շինում է դաստակերտ եւ անունը դնում Հայք: Այս պատճառով էլ գավառն այժմ անվանվում է Հայոց Ձոր»: Այսպես՝ հայերի մեջ սերնդեսերունդ կենդանի է պահվում արդար գործի համար նահատակված նախնիների հիշատակի երկրպագությունը, որը ճշմարիտ աստվածապաշտության վկայություններից է:

Հայկը նաեւ կործանված չարքն ի ցույց դրեց, որ ամենքը տեսնի եւ հիշի, որ հայ ազգը խավարը եւ ստրկությունը մերժող ազգ է: Մովսես Խորենացին այս մասին գրել է. «Իսկ այն բլուրը, որտեղ Բելն ընկավ քաջ մարտիկների հետ, Հայկը կոչեց Գերեզմանք, որ այժմ ասում են Գերեզմանակք: Բայց Բելի դիակը դեղերով զմռսելով՝ Հայկը հրամայում է տանել Հարք եւ թաղել մի բարձրավանդակ տեղում՝ ի տես իր կանանց եւ որդիների»: Եվ դա այն կործանված Բելն էր, որն ահ ու սարսափի մեջ էր պահում մարդկությանը: Թվում է, թե նախախնամությամբ, ինչպես այս անգամ Բաբելոնից եկող չարիքը կործանվեց Արարատի լեռներում, նմանապես, հետագայում բաբելոնյան բռնակալության կործանումը, ըստ Աստվածաշնչի, սպասվելու էր Արարատյան թագավորություններից:

Մովսես Խորենացին, որպես հայոց մեջ նախնյաց պաշտամունքի գերագույն դրսեւորում, գրել է. «Իսկ մեր աշխարհը մեր նախնի Հայկի անունով կոչվում է Հայք»:

*Էդուարդ ԴԱՆԻԵԼՅԱՆ*
*Պատմ. գիտ. դոկտոր*

# ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿՈՉՈՒՄԸ

Ծանր ու պատասխանատու է «հրեշտակակրոն այն պաշտոնը», որին կոչվում է հոգեւորականը: Այս պատճառով Պողոս առաքյալն իր Տիմոթեոս աշակերտին ասում է. «Ձեռքդ շտապով որեւէ մեկի վրա մի՛ դիր», որովհետեւ ոչ թե նա է ընտրյալ, ով ինքն է իր անձն ընծայում, այլ նա, ով Աստծո կողմից է ընծայված:

Մասնավոր վարդապետության չորս եւ ծայրագույն վարդապետության տասը աստիճանները մեր եկեղեցու նվիրապետության գիտական պատվավոր աստիճաններն են, որ թեկնածուին տրվում են այդ աստիճաններն ունեցող եպիսկոպոսի կողմից: Ուստի հարկ է, որ «մանրակրկիտ քննությամբ, արթուն հսկողությամբ» նկատի առնվեն այդ իշխանության թեկնածուների «անստգյուտ ընթացքը», անթերի գիտակցությունը, ուսումնասիրությունը, նկարագրի կայունությունը, կոչման գիտակցությունը, «անբամբաս քաղաքավարությունն ու այլ ինչ բազմապատիկ կատարելությունք»,- պատվիրում է ձեռնադրության «Մաշտոց» ծիսարանը:

Ուսուցանելու այս պատվավոր աստիճանը մեզ է ավանդել Հիսուս Քրիստոսն Ինքը՝ համաձայն «Մաշտոցի» այն վկայակոչման, որ արվում է ավետարանական խոսքով. «Օրհնյա զվարդապետս զայս քոյին օրհնությամբդ, որպես հետ հարությանն եդեր զձեռն քո ի վերա առաքելոցն, եւ արարեր զնոսա վարդապետս՝ ասելով. Ահա ետու ձեզ իշխանություն, գնացեք այսուհետեւ աշակերտեցեք զամենայն հեթանոսս»:

Ս. Պողոս առաքյալն այս մասին գրում է. «Եվ ում որ Աստված կարգեց եկեղեցու մեջ, սրանք են նախ՝ առաքյալներ, երկրորդ՝ մարգարեներ, երրորդ՝ վարդապետներ»:

Ըստ այսմ էլ՝ աստվածապարգեւ այս շնորհները մեր եկեղեցու հիմնադիրներ Ս. Թադեոս եւ Ս. Բարթողոմեոս առաքյալների կողմից փոխանցվել եւ Լուսավորիչ Ս. Հայրապետի միջոցով հասել են մինչեւ «ի քաջ րաբունապետսն ազգիս ի մեծն Մեսրոպ», որ եւ հույների կողմից արժանացավ «էկլեսիաստիկոս»-ի կոչմանը:

«Վարդապետ» բառը նշանակում է ուսուցիչ, ուսուցանող, առաջնորդ ուսման, այլ խոսքով՝ վարդապետները եկեղեցու վարդապետության եւ դավանության գաղափարախոսներն են, ուղղափառության ճշմարիտ պաշտպանները, մեկնիչներ ու քարոզիչներ: Նրանք «սուրբ եկեղեցում տնկված ծիթենիներ են, որ հարազատ դալարությամբ լույսի նյութ են պատրաստում հոգվոց լապտերների համար եւ Աստծո պատգամն են բերում ժողովրդին, քարոզում եւ իմաստասիրում, քանզի աստվածաբան են եւ աստվածամիտ»:

Մեր գիտուն վարդապետները Հայաստանի զանազան գավառներում՝ վանքերի շուրջ, հավաքում էին բազմաթիվ աշակերտների եւ ուսուցանում նրանց: Իսկ ծայրագույն վարդապետները գիտնականի հռչակ էին վայելում եւ որպես կանոնական սովորություն՝ ամեն մի թեմում իրավունք ունեին քարոզելու բեմից՝ որպես Հայաստանյայց եկեղեցու վարդապետության ճշմարիտ ուսուցանողներ:

«Վարդապետի» կոչումը՝ որպես գիտական տիտղոս, տրվում է առանձին հանդիսությամբ, ինչպես նշվում է «Մաշտոցում»: Գիտական այս տիտղոսը տրվում է միայն այն եպիսկոպոսների կողմից, ովքեր ունեն վարդապետական եւ ծայրագույն վարդապետական բոլոր աստիճանները: Իբրեւ քարոզչի բուն կոչման արտահայտություն՝ նորընծա վարդապետները Վեհափառ Հայրապետի կողմից արժանանում են օծագլուխ գավազան բռնելու, ակնակուռ լանջախաչ եւ ծաղկյա փիլոն կրելու մեծագույն պատվին:



Մինչ այսօր թեզերի պաշտպանությունից հետո թեկնածուներին մասնավոր եւ ծայրագույն վարդապետության գավազանի տասնչորս աստիճանների տվչությունը կատարվում է Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում՝ մեծ րաբունապետի ուխտավայր շիրմի մոտ:

Վարդապետական կարգը կանոնադրել է Մխիթար Գոշն իր «Դատաստանագրքում»: Մխիթար Գոշից հետո «Վարդապետական աստիճանի տվչության ծիսական կարգը» կազմել է Գրիգոր Տաթեւացին:

Ըստ Օրմանյան սրբազան պատրիարքի վկայության. «Հայ վարդապետությունն աստվածաբանության մագիստրոսի աստիճանին է համապատասխանում»:

Վարդապետական օծագլուխ գավազանի տվչությամբ՝ հայ հոգեւորականին իշխանություն է տրվում այսուհետ «ամենայն համարձակությամբ Աստծո փրկարար խոսքն ու եկեղեցու անխախտ վարդապետությունը քարոզելու, մեղավորներին կոչելու ապաշխարության, մոլորյալներին ճշմարիտ գիտության վերադարձնելու, խրատելու, սաստելու, հանդիմանելու եւ ըստ առաքելական խոսքի՝ դարձյալ մխիթարելու մեր ազգի բոլոր վիճակներում ու եկեղեցիներում անխտիր»:

Մեր եկեղեցու բարեզարդության ամենահիմնական խնդիրներից մեկը մեր հոգեւորականության, եկեղեցու պաշտոնեության պատրաստության հարցն է: Միայն լուսամիտ, զարգացած, հավատավոր եւ կարգապահ հոգեւորականությունն Աստծո օրհնությամբ կարող է եկեղեցին պահել բարեկարգ եւ բարեզարդ վիճակում:

«Մենք առավել, քան զամենեսեան, ունիմք պետս հոգւոց բժշկութեան», վկայում է Շնորհալի հայրապետը:

*Արկադի սրկ. ԹԱՆԴԻԼՅԱՆ*

**Ի. ՔԱՀԱՆԱ ԺԻԼՈՎ**

# ԻՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԻԿ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՄԱՍԻՆ

*Սկիզբը՝ թիվ 3, 4*

Ըստ ամերիկացի երկրաբան **Դանի (1813-1895)**՝ բնական գիտությունները իրենց գլխավոր դրույթներում համամիտ են Մովսեսի տիեզերածնությանը: Այստեղից էլ նա եզրահանգում է, որ Աստվածաշունչը ոչ թե մարդկային, այլ աստվածային ծագում ունի: Նա գրում է. «Կարելի է եզրակացնել, որ եթե Մովսեսի վավերագիրը հավաստի է (իսկ այն հավաստի է, քանի որ Ս. Գրքի՝ տիեզերածնության իրադարձությունների հաջորդականությունը, ըստ էության, համահունչ է երկրաբանական տվյալներին), ապա այն աստվածային ծագում ունի: Բանն այն է, որ մարդկային միտքն այդ իրադարձություններին ականատես չի եղել եւ չէր էլ կարող հորինել աշխարհի նախնադարյան տարիքի վերաբերյալ փաստերի այդպիսի դասավորություն, եթե օժտված չլիներ գերբնական խորաթափանցությամբ: Արեւի՝ երկրագնդի լույսի աղբյուրի արարումը նա երբեք չէր դնի լույսի արարումից բավական երկար ժամանակ անց, այսինքն՝ չորրորդ օրը, եւ որ նույնքան զարմանալի է՝ բույսերի ու կենդանիների արարման միջեւ, թեպետեւ այս լուսատուն նույնքան կենսական է եւ առաջինների, եւ վերջինների համար: Ոչ ոք չէր կարողանա հասնել փիլիսոփայության այնպիսի խորության, որը նկատվում է այստեղ ամենուր... Իր կտավում արարչագործությունը մեզ համար պատկերող սուրբգրային պատումը խորապես փիլիսոփայական է: Այստեղ ամեն ինչ ճշմարիտ է եւ աստվածային: Ահա Ս. Գրքի առաջին իսկ էջի ապացույցն այն բանի, որ արարչագործությունն ու Աստվածաշունչը միեւնույն Աղբյուրից են: Մեծ Հեղինակի երկու գրքերի միջեւ չի կարող իրական տարաձայնություն լինել: Թե՛ մեկը, թե՛ մյուսը մարդկությանը Նրա կողմից շնորհված հայտնություններ են»:

Աստվածաշունչը բարձր է գնահատում Վիեննայի համալսարանի հանքաբանության եւ երկրաբանության պրոֆեսոր **Վ. Վագենը (մահ. 1900)**՝ ժամանակակից ամենահռչակավոր հնէաբաններից մեկը: Տիեզերքի խնդրին վերաբերող իր հոդվածում նա գրում է. «Գիտնականը պետք է համաձայնի, որ աշխարհի արարման մասին [աստվածաշնչական] պատմությունը ոչ միայն շարադրված է այնպես, որ հազարամյակների ընթացքում սնի ինչպես առանձին անհատների մասաղ զգացմունքը, այնպես էլ մանկական հասակում գտնվող ժողովուրդներին եւ նրանց համար միջնորդ ծառայի բարձրագույն ճշմարտությունների ճանաչման հարցում, այլեւ հազարամյակներ անց էլ այն պարունակում է ցուցումներ, որոնք կարող են միայն հաստատվել՝ կապված գիտելիքի մյուս բնագավառներում գիտական պրպտումների ահռելի ջանքերի հետ: Գրական առավել մեծարժեք եւ փառահեղ ստեղծագործություն երբեւէ գոյություն չի ունեցել հնագույն ժամանակներից ի վեր»:



Նորագույն ժամանակների հռչակավոր երկրաբաններից մեկը՝ մեծ տյուբինգենացի **Կվենշտեդտը (մահ. 1889)**, գրում է. «Այս Գիրքը (Ծննդոցը՝ աշխարհի արարման պատմությունը) այնքան ճշմարիտ է, որ մենք, իբրեւ հարգանք հնագույն տեսակետի հանդեպ, համարձակվում ենք այսօր էլ պնդել, որ Մովսեսը մեծ երկրաբան էր, որտեղից էլ նա քաղած լիներ իր երկրաբանական տեղեկությունները: Նրա պնդումը, թե երկրի վրա նախ եւ առաջ բուսականությունն է գոյացել, չի կարող ժխտվել, որովհետեւ հենց ջրային բույսերն են պատկանում ստորին դասին»: Այնուհետեւ Կվենշտեդտը բացականչում է չորրորդ օրը արեգակի արարման առնչությամբ. «Որքա՜ն ճիշտ է այդ: Չէ՞ որ երկրագունդը, որ համեմատաբար փոքրամարմին է, պետք է արարվեր հսկայական չափեր ունեցող մարմնից՝ արեգակից առաջ»:

Ամերիկացի անվանի գիտնական, երկրաբան **Ջոն Դաուսոնը (1820-1901)** շատ ճիգ ու ջանք է գործադրել գիտությունը Աստվածաշնչի հետ հաշտեցնելու, նույնքան էլ՝ երկրաբանական տվյալներն այս ուղղությամբ ժողովրդականացնելու համար: Նա այսպես է արտահայտվել աստվածաշնչական տիեզերածնության մասին. «Ով էլ երբ էլ փորձեր շարադրել տիեզերքի պատմությունը, այդ փորձն ավելի վսեմ ու արժեքավոր չէր կարող լինել, քան աշխարհի արարման սուրբգրային պատումը»:

Անվանի պրոֆեսոր բնագետ **Դրումոնդը (մահ. 1897)** երբեմն դիմում էր ընկերներին՝ իր հետ աղոթելու եւ իր համար Նորկտակարանյան որեւէ հատված բարձրաձայն ընթերցելու խնդրանքով: «Չէ՞ որ դա միակ գիրքն է,- ասում էր նա Նոր Կտակարանի մասին,- որին միշտ դիմում ես վերստին»:

Պրոֆեսոր **Թոմաս Հեքսլին (1825-1895)**՝ խոշորագույն բնագետ-դարվինիստներից մեկը, ուշագրավ տողեր ունի Ս. Գրքի վերաբերյալ: «Ուշադրություն դարձրեք պատմական այն մեծ փաստի վրա,- նկատում է անգլիացի գիտնականը,- որ երեք հարյուրամյակի ընթացքում այս Գիրքը (այսինքն՝ Աստվածաշունչը) սերտորեն առնչվել է այն ամենի հետ, ինչն Անգլիայի պատմության մեջ լավագույնի եւ ազնվագույնի համարում ունի: Ուրի՞շ ո՞ր գրքի ուսումնասիրության միջոցով կկարողանայինք այսքան մարդասիրաբար ներգործել երեխաների վրա եւ ստիպել նրանց զգալ, որ յուրաքանչյուրն արժանի է հավիտենական օրհնության կամ հավիտենական անեծքի՝ ըստ բարին գործելու եւ չարն ատելու իր գործադրած ջանքերի... Ես չեմ ասում, թե Ս. Գրքում արծարծված բարձրագույն իդեալն ինքնին բացառում է մյուսները կամ որեւէ այլ լրացումների կարիք չունի: (Հարկ է նշել, որ գիտնականի այս միտքը աստվածաբանական առումով ճիշտ չէ: Աստծո խոսքն ինքը ճշմարտությունն է, որը մարդկային սին իդեալներով լրացվելու կարիք բնավ չունի: Իսկ եթե Աստծո խոսքը չի բացասում մարդկային վարդապետությունները, ապա դա քրիստոնեական հանդուրժողականության հետեւանք է): Սակայն խորապես հավատում եմ, որ մարդկությունն այսօր անկարող է ապրել առանց Գրքի եւ թերեւս երբեք էլ չկարողանա»:

Անցյալ դարի վերջում Ֆրանսիայում վախճանվեց հանրահռչակ բնագետ, նշանավոր քիմիկոս եւ բնախոս **Լուի Պաստյորը (1822-1895)**: Նա շատ էր սիրում եւ մեծարում Աստվածաշունչը, մանավանդ Աստծո Նորկտակարանյան խոսքերը: Իր համբավի գագաթնակետում նա գրել է. «Երջանիկ է նա, ով ծառայում է ավետարանական առաքինությունների իդեալին: Ահա՛ մեծ խորհուրդների եւ սխրանքների աղբյուրը»:

Պաստյորի մասին պատմում են, թե մի անգամ նրա աշակերտներից մեկն իր հանճարեղ ուսուցչին հարցնում է, թե ինչպես նա՝ մեծ գիտնականը, մտքի գերլարված աշխատանքից եւ գիտական այնքան պրպտումներից հետո էլ դեռեւս հավատում է Ս. Գրքի վարդապետությանը: Պաստյորը հրաշալի պատասխան է տալիս. «Քանի որ մտածել եմ եւ ուսումնասիրել, այդ իսկ պատճառով մնացել եմ բրետոնացուն վայել հավատացյալ: Իսկ եթե առավել խորհեի ու զբաղվեի գիտություններով, ապա կդառնայի այնպիսի հավատացյալ, ինչպիսին բրետոնացի գեղջկուհին է լինում» (հայտնի է, որ բրետոնացիները հնուց ի վեր աչքի են ընկնում իրենց անսասան հավատով): Մահվան վերջին րոպեներին ֆրանսիացի գիտնականը, դողդոջուն ձեռքերով բռնելով պղնձե ոչ մեծ խաչը, հոգին ավանդում է աստվածային Հայտնության ճշմարտությունների հավատո հանգանակի խոստովանության խոսքերով:

*Շարունակելի*

*Թարգմանությունը ռուսերենից՝*
*Գրիգոր ԴԱՐԲԻՆՅԱՆԻ*
*Ավետ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ*

